ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

Նոր տոմարով դեկտեմբերի սկզբներին, անցեալ տարի կայացաւ Հնդկաստանի Բոմբէյ քաղաքում «Հ ն դ կ ա կ ա ն բ ն ի կ ն ե ր ի կ ո ն գ ր ե ս ը», կամ այսպէս կոչուած՝ Ա զ գ ա յ ի ն կ ո ն գ ր ե ս ը։ Այդ վեցերորդ անգամն է, որ կայանում է հնդկաստանցիների Ազգային կոնգրեսը։ Եւրոպական մամուլը շարունակ ստանում էր նամակներ և հեռագիրներ այդ եղելութեան մասին, որի բնաւորութիւնը և նշանակութիւնը «Մուրճ»-ի ընթերցողները կարող են դատել ներկայ յօդուածից, որ տպուած էր Միւնխենի «Ալգեմայնէ Ցայտունգ» լրագրի ներկայ տարուայ № 9-ի մէջ, որպէս երևում է, գրուած մի մարդուց, որը Հնդկաստանը անձամբ ճանաչում է։ Յօդուածի վերնագիրն է՝ Անգլիական կառավարութիւնը և Ազգային կոնգրեսը։

«Այս վերջին օրերը նամակներ և հեռագիրներ են ստացւում Հնդկաստանից, որոնք տեղեկացնում են վեցերորդ «Հնդկական բնիկների կոնգրեսի» մասին, որը Բոմբէյում կայացաւ։ Քանի որ այդ, այսպէս կոչուած, Ազգային կոնգրեսը բաւականի նշանաւոր երևոյթ է հնդկական հանգամանքների մասին դատողութիւն տալու համար, կ'ուզենայի հաղորդել մի քանի դիտողութիւններ, որ ես անցեալ տարի առիթ ունեցայ անելու և որոնք կը լուսաբանեն այն քաղաքական շարժումը, որը Ազգային կոնգրեսի հիմքն է կազմում։

«1888 թ. վերջում ես Բենգալիայումն էի (Հնդկաստանի մի մասը) և այնտեղ աչքիս ընկաւ, որ քաղաքներում, փողոցների անկիւններում, անգլիական և հնդկական լեզուներով գրուած մեծ աֆիշներով հրաւիրւում էին Ազգային կոնգրեսի համար, որը այն ժամանակ, եթէ չեմ սխալւում, Ալլահաբադում պէտք է գումարուէր։ Բնիկներից զանազան խմբեր, կանգնած նոցա առջև, տաք տաք խօսում էին, բայց ես առիթ չը գտայ կոնգրեսի մասին տեղեկանալու։ Երբ անցեալ 1889 թուականի գարնանը Հնդկաստանի հարաւային կէտ ընկած տեղերում ճանապարհորդում էի և ամբողջ շաբաթներով ես միայն բնիկների հետ գործ ունէի, առիթ գտայ Ազգային կոնգրեսի մասին տեղեկութիւններ ստանալու. ինձ այդ մասին տեղեկացրին այնպիսի բաց սրտով, որ ինձ զարմացրեց. և որը ինձ ապացուցեց, թէ այն գաղափարները, որ Ազգային կոնգրեսը փայփայում է, որքան խորը թափանցել են ժողովրդի մէջ և թէ որքան հնդկաստանցիք ճանաչ են նոցա յեղափոխական բնաւորութեանը։

«Մի շատ կրթուած բրամին, որը իմ երկրաբանական ուղևորութիւնների ժամանակ մի քանի օր շարունակ ինձ ուղեկցում էր, հետաքրքրական բաներ հաղորդեց, որոնցից ես քաղում եմ հետևեալը։—Ազգային կոնգրեսը բնիկ հնդկացիների միութիւն է, որի նպատակն է՝ Արևելեան Հնդկաստանի անկախութիւնը առաջ տանել։ Ամենից առաջ պահանջում են, որ բը-

նիկ ժողովուրդը պարլամենտական ներկայացուցչութիւն ունենայ կառավարութեան մէջ, օրինակի համար, որ մի տեսակ սենատ կազմուի՝ կառավարութեան ճիւղերի մէջ մասնակցութիւն ունենալու իրաւունքով։ Մանաւանդ պէտք է, որ բոլոր օրէնքները՝ հարկերի վերաբերեալ՝ այդ ազգային պատգամաւորների ժողովից կախումն ունենան։ Երկրորդ՝ պահանջում ենք, որ անգլիական Թոշակաւոր զօրքը փոխարինուի ընդհանուր զինւորական ծառայութիւնով, որը սակայն չը պէտք է մշտական կանգուն զօրք լինի, որը երկրի տուրքերի մի մեծ մասը սպառի, այլ կոչուի միայն հարկաւոր եղած ժամանակ։

«Երբ ես ասացի, թէ մի նուաճուած երկրում այդ պահանջները ինձ շատ յեղափոխական են թւում, բրամինը ինձ պատասխանեց.—Մեզնից հեռու է այս միտքը, որ այդ նպատակներին հասնելու համար յեղափոխական միջոցներ գործ դնենք. մենք ուզում ենք Անգլիային հաւատարիմ մնալ, բայց մենք մեր տիրապետողների արդարամտութիւնից սպասում ենք, որ նոքա մեզ քաղաքական իրաւունքներ տան այն մեծ ֆինանսական ծանրութիւնների փոխարէն, որ մենք կրում ենք։

«Խնդիրը սրանումն է, թէ հնդկաստանցիք պիտի կարողանան իրանց նպատակին հասնել, թէ ոչ։

«Այստեղ պէտք է նկատել, որ Ազգային Կօնգրեսի անդամների, այո, անգամ ղեկավարների մէջ գտնւում են նաև անգլիացիք, և նոյն իսկ Բօմբէյում նորերումս կայացած կօնգրեսի նախագահն էր մի անգլիացի՝ սիր Վիլլիամ Վեդդերբօրն։ Ուրեմն անգլիացիք չեն վախենում, որ Ազգային Կօնգրեսը կարող է տանել դէպի Հնդկաստանի անկախութիւնը. և գուցէ կօնգրեսին մասնակցող անգլիացիք ջանք են անում, որ Ազգային Կօնգրեսի նպատակները պահպանուեն կարելիութեան սահմանների մէջ։ Պարսիները, որոնք Հիւսիսային Հնդկաստանում մեծ առևտուրի ներկայացուցիչներ են, շարժումից հեռու են կանգնած, որովհետև անգլիական կառավարութեան ներքոյ իրանց շատ լաւ են զգում։ Նաև մահմեդականները, որպէս այդ երևում է Բօմբէյի լրագիրներից, շարժման բարեկամ չեն ցոյց տալիս իրանց, չը նայած որ Հնդկաստանում նոքա կազմում են ամենայեղափոխական տարրը և վերջին ապստամբութեան միջոցին ղեկավարների դեր էին կատարում։

«Թէ ինչ դիրք են բռնած դէպի խնդիրը հարաւային Հնդկաստանի մահմեդականները,—չը կարողացայ իմանալ. բայց ինձ թւաց, թէ Ազգային Կօնգրեսը գտնում է իւր կենակէտը երկրագործ հնդիկ և թամիլ ազգաբնակութեան մէջ։

«Անգլիացոց արևելա-հնդկական տիրապետութիւնից առաջ, Հնդկաստանը կազմուած էր իշխանութիւններից, որոնք ազգով, կրօնով և կաստաներով բաժանուած լինելով, իրար հետ եռանդով կռւում էին և որոնց բնակիչները, իրանց իշխանների կամայականութեան ներքոյ, շատ չարիքներ

էին կրում։ Այն ցեղերը, որոնք այսօր անգլիական դպիսոնի ներքոյ խաղաղ կերպով իրար հետ ապրում են, բացի անգլիական կառավարութիւնից՝ չունին ոչ մի ուրիշ ընդհանուր կապ. և նոյն իսկ Ազգային Կոնգրեսը, իւր հայրենասիրական ձգտումներով, անկարող կը լինի պարսերին, հնդիկներին, մոնգոլներին, մահմեդականներին, թամիլներին և ուրիշ մաները էթնոգրաֆիական ցեղերը միացնել։

«Բացի դրանից, անգլիական կառավարութիւնը շատ է ուժեղ, որպէս զի մի ազգային ապստամբութիւն կարողանայ իւր ցանկութիւնները զօրով իրագործել։ Պէտք է Հնդկաստանի մէջը ճանապարհորդած լինել, հասկանալու համար, թէ Անգլիան այնտեղ ինչ հիանալի ոյժ է ցոյց տալիս։ Իւր գործելու կարևոր միջոցներից մէկը՝ երկաթուղիներն են, որոնք երեք կարգի կարելի է բաժանել. 1) երկաթուղիներ մեծ երթևեկութեան համար (որպէս Բոմբէյ—Կալկաթա—Մադրաս), 2) երկաթուղիներ, որոնք տանում են դէպի առողջական կայարանները, որպէս Դարջիլինգ Հիմալայում (7.200 ոտնաչափ բարձր), Սիմլա, Նիլգիրի, Նուրեյլիա (Ցէյլոնում) և, վերջապէս, 3) երկաթուղիների մեծագոյն մասը, որոնք, ինչպէս երևում է, չինած են զինուորական նպատակներով և որոնք տանում են դէպի որ և է մեծ բանակատեղի։

«Հեռագրական թելերի հետ միասին՝ երկաթուղիները կազմում են ամենազօրեղ միջոցը Անգլիայի համար՝ որ և է ապստամբութիւն բոպկապէս խեղդելու։ Դոքա են կարելի դարձնում, որ ամենահեռաւոր նահանգական քաղաքներում մի կոլլեկտոր (նահանգապետ) նստի, որը առանց որ և է զինուորական պաշտպանութեան, նահանգի, վիճակի տէրն է և տանում է ամենամեծ տուրքերը առանց վտանգի։ Իւր անձի համար։ Նահանգում նա ամենակարող անձն է։ Զգներով լծած սայլերի վերայ ճանապարհորդելիս ես ունէի հետս, բացի մի խոհարարից և մի թարգմանից, նաև մի պաշտօնեայ, որին ինձ տրած էր կոլլեկտորի բարեհաճութեամբ. գիւղերի տանուտէրերին նամակներ էին ուղարկւում առաջուց։ Հէնց որ ես մօտենում էի մի գիւղի, ինձ դիմաւորում էին գիւղի աղսախակալները, որ ոտաբոբիկ և ձեռները հողով լցուած ինձ ողջունէին. մի տուն ինձ համար պատրաստ էր՝ ամեն յարմարութիւններով, ինչ միայն այդ հեռաւոր տեղերում գտնել կարելի է։ Գիւղի տանուտէրը ինձ այցելում էր երաժիշտներով և պարողներով ուղեկցած, և ամենուրեք աշխատում էին, որ ես բարեհաճ լինիմ։ Մի գիւղ խնդրում էր մի թանկ (ջրամբար), մի ուրիշը՝ գիւղի ճանապարհ, և միշտ պէտք է բարեխօսէի կոլլեկտորի մօտ, որը իբր մի աւելի բարձր էակ էր նկատւում։

«Անկարևոր չէ և այն հանգամանքը, որ Հնդկաստանի քաղաքներում առհասարակ զէնքեր չեն տեսնւում։ Ոչ սուր և ոչ հրացան չէք տեսնիլ այն տեղերում, որոնք անգլիական անմիջական իշխանութեան ներքոյ են։

«Այս պայմանների մէջ մեզ չը պիտի զարմացնի, որ հնգկական կառավարութիւնը առանց հոգսի նայում է Ազգային Կոնգրեսի վերայ։ Եթէ Ազգային Կոնգրեսը մի նպատակի հասնի, այդ նա կարող է անել միմիայն Անգլիայի համաձայնութեամբ և ոչ սորա կամքի հակառակ։»